ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ՀԱԿՀՈՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

3.07.2026թ. Շղարշիկ բնակավայր

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- Թալին համայնքի ղեկավարի օգնական Ա. Պողոսյանը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գ. Միրզախանյանը,
- Շղարշիկ բնակավայրի վարչական ղեկավար Ս. Գասպարյանը,
- «Հակհով» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Հարությունյանը, Գ. Հովսեփյանը,
- Շղարշիկ բնակավայրի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2026թ. հուլիսի 3-ին ժամը 12:00-ին Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով նաև վարեց հանրային լսումը:

Հովիկ Մեսրոպյանը նշեց, որ Օրենքով և Որոշմամբ սահնանված պահանջներին համապատասխան Թալին համայնքի Շղարշիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, 2025թ. փետրվարի 25-ին կայացել է առաջին հանրային լսումը, որի արդյունքում Թալին համայնքի ավագանին նախատեսվող գործունեությանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը: Այնուհետև նա ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, տարբեր գերատեսչություններ, Արագածոտնի մարզպետարանը, Թալինի համայնքապետարանը: Ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա նախաձեռնողը լրամշակել է ՇՄԱԳ հաշվետվությունը: Լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և որոշման պահանջներին համապատասխան նշանակվել է երկրորդ հանրային լսումները, որի վերաբերյալ կատարվել է ծանուցում: Սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2026թ. հունիսի 16-ի 100/7550/ համարում, ինչպես նաև տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց, նախատեսվող գործունեությունը, հնարավոր ազդեցությունները և ազդեցությունները մեղմման միջոցառումները:

Ելույթ ունենալով ընկերության ներկայացուցիչ Մ. Հարությունյանը, ներկայացրեց կատարվելիք աշխատանքների ծավալները, ժամկետները և շրջակա միջավայրի և համայնքի բնակչության վրա սպասվելիք ազդեցությունները:

Թալին համայնքի ղեկավարի օգնական Ա. Պողոսյանը կողմից եղավ հարցադրում հայցվող տարածքում դաշտամիջյան ճանապարհի առկայության վերաբերյալ: Նախագծի հեղինակ Գ. Հովսեփյանը պատասխանեց, որ հայցվող տարածքում դաշտամիջյան ճանապարհ չի անցնում:

«ՀԱԿՀՈՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հ. Մեսրոպյան

«ՀԱԿՀՈՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Հովսեփյան